վուրդք տեղւոյն առհասարակ կոչեն զայն՝ Հոպ՝ էլ Մէ՝էհ՝ և զերկրորդն՝ Ճէ՝ռանը էվէ, այսինքն տուն Աննա քահանայապետի, որ այժմ ասի՝ Տէր էլ ՀՅՐ՝ՈՒՆԷ։ Սակայն Հայք ցուցին թէ այլ են այդոքիկ տեղիք, որք են աւերակ, և այլ մերքն՝ որք են չէն։ Յետ ծանուցելոյ զայս ամենայն Ատենին երկար բանիւք, մատուցին զյատակագիծս վանորէից Հայոց և Յունաց, որով առաւել պարզեցաւ խընդիրն, և գրեցաւ վանք մեծ Ս՝ Յակոբ 'ի Թաղն Սիոնի, և օրն տարաժամեալ փակեցաւ Ատեանն։

Այս նիստ առաւել տաժանելի եւ դժուարին եղեւ Հայոց, զի ոչ ունէին 'ի ձեռս իւրեանց ոչ գիր և ոչ արձանագրութիւն, զի զոր ինչ ասէին բանիւ՝ ոչ կարէին հաստատել գրով, և տարակուսեալ էին թէ իցե՞ն արդեօք հրովարտակք յերուսաղէմ։ Զի թէպէտեւ բոլոր տեղիքն Հայոց գրեցան յիլամին, բայց երեք հետեւակ ազգքն մնացին արտաքոյ՝ զի Յոյնք ասէին՝ թէ մեր են, և Հայք զհակառակն պնդէին, Դատաւորք խոստացան՝ եթէ իցեն անուանք նոցա գրեալ 'ի հրովարտակս Հայոց՝ նոցա լիցին, իսկ եթէ ոչ՝ Յունաց՝ և Հայք յանձն առին և խոստացան յԱտենի անդ բերել զհրովարտակս իւրեանց, զի Դիոնէսիոս վարդապետ հաւաստէր նոցա, թէ հրովարտակքն են 'ի դանձարանն Ս՝ Յակոբայ։

Եւ 'ի վաղիւն ժողովեցան Իշխանաւորք ազգին ընդ Յովհաննու Պատրիարքի 'ի Նոր խան՝ ԼՃՃայ օթոյ կոչեցեալ տեղին ('ի 10 Օգոստոսի), որոց միաբան սիրով յանձն առեալ էր յօժարութեամբ աշխատիլ յայս գործ բանիւ և արդեամբք 'ի փրկութիւն ազգային սեփհականութեան, և գրեցին յերուսաղէմ առ Թէոդորոս Պատրիարք սպառնալեօք եւ ստիպմամբ մեծաւ, անպատճառ առանց ինչ ածելոյ զմնաւ առաքել զԱթթի Շէրիֆն, զի առանց նոցին չէր հնար ընդդէմ զինիլ թշնամւոյն՝ և թափել 'ի ձեռաց նորին զսեփհականութիւնս ազգին, զի կարի կարեւորք էին նոքա առ այն դատաստան։ Զկնի ելանելոյ իրաւանց 'ի ձեռաց մերոց ասէին՝ զի՞ եւս պիտոյ են հրովարտակք, բայց եթէ ընկենուլ 'ի հուր, զի եթէ դարձեալ կասկածելով 'ի սնոտի երկիւղէ ինչ ոչ առաքեսցես զնոսա, անպարտ եմք առաջի Աստուծոյ, հրաժարեալ